ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՄԻՇԱ ՎԱՐՈՒԺԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աիդա Օնիկի Թոփուզյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Իգոր Կարապետի Կարապետյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հակոբ Վանիկի Թադևոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. նոյեմբերի 11-ին՝ ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2021թ.-ի սեպտեմբերի 29-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման գործընթացի հիմքում ընկած են անձի կրթության իրավունքի իրացման, ցկյանս ուսումնառության, լրացուցիչ և շարունակական կրթության հայեցակարգերը, հումանիստական մանկավարժության հարացույցը, բոլորի համար կրթության հասանելիության և մատչելիության գաղափարներն ու սկզբունքները:

ՔԿՀ-ներում կրթադաստիարակչական գործընթացի և աշխատանքի ուսումնասիրությունն ունի ոչ վաղ անցյալ, չնայած որ անձի կրթադաստիարակչական ճանապարհով վերափոխումը դեռևս վաղ ժամանակներից գտնվել է անտիկ փիլիսոփաների, անձի զարգացման հիմնախնդրով զբաղվող հոգեբանների, մանկավարժների, սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատությունից զրկված անձանց վերադաստիարակությունն ու կրթությունը բարդ և երկարատև սոցիալ-մանկավարժական գործընթացներ են, սակայն պատմական տարբեր ժամանակահատվածներում առկա փորձառությունը հնարավորություն է տալիս դիտարկել կրթությունը՝ որպես պատիժ կրող անձանց արդյունավետ ուղղման միջոց, կրկնահանցագործության կանխարգելման կարևոր գործոն: Ներկայումս քրեակատարողական համակարգում կրթության զարգացման միտումները և այդ ոլորտի նկատմամբ շարունակաբար մեծացող հումանացման պահանջն առաջադրում են մի շարք նոր մարտահրավերներ, որոնք ընդհանուր առմամբ միտված են հանցանք կատարած անձի վերադաստիարակությանն ու վերասոցիալականացմանը, դրանց ուղղված հմտությունների ձեռքբերմանը, անհրաժեշտ մեխանիզմների և պայմանների ապահովմանը: Նշվածների շարքում առանձնահատուկ դերակատարում է ստանում կրթության կազմակերպումը:

ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման անհրաժեշտությունը բխում է ինչպես դատապարտյալների և կալանավորված անձանց, այնպես էլ հասարակության և պետության շահերից: Այսպես, պետության համար թիրախային այս խմբի կրթության կազմակերպումը հասարակության հումանացան, հանրային անվտանգության ապահովման, սոցիալապես առողջ քաղաքացու ձևավորման, կրկնահանցագործությունների կանխարգելման և իրավախախտումների ընդհանուր սոցիալական պատկերի բարելավման երաշխիք և հնարավորություն է: ՔԿՀ-ներում պատիժ կրող անձի համար կրթությունը հասարակություն ինտեգրվելու կարողությունների զարգացման, մարդու իրավունքների կարևորման, իրավունքը որպես սոցիալական արժեք գիտակցելու, ազատության գաղափարը արժևորելու և ապագայի նկատմամբ դրական կողմնորոշում ձևավորելու, ինչպես նաև ինքնակրթման և ինքնադաստիարակության միջոց և հնարավորություն է:

Այս գաղափարներն իրենց արտացոլումն են գտել նաև կրթության իրավունքն ամրագրող միջազգային հիմնարար, հռչակագրային և պարտադիր բնույթ կրող ուղենիշներում՝ կարևորելով պետությունների կողմից յուրաքանչյուրի համար կրթության իրավունքի իրացման հանձնառությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հայաստանյան իրականության հետևյալ առաջնահերթություններով.

- Հայաստանյան իրականության մեջ բազմիցս շեշտադրվում է կրթության ներառականության և հասանելիության կարևորությունը բոլորի համար: ՀՀ-ում կրթության իրավունքի և դրա իրացման, հավասար հնարավորությունների, հասանելիության և մատչելիության վերաբերյալ ամրագրված են մի շարք իրավական կարգավորումներ: Անձի կրթության իրավունքի ապահովումը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով (2014-2015թթ.), ՀՀ Կառավարության տարեկան գործունեության ծրագրերով (2019-2022թթ.), իսկ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքը ՀՀ-ում ամրագրված է արդարադատության բնագավառի քաղաքականության մեջ:
- ՀՀ արդարադատության բնագավառի բարեփոխումներում առանձնակի կարևորվում է քրեակատարողական համակարգում կրթության միջոցով պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցման հիմնախնդիրը:
- ՔԿՀ-ում պատիժ կրող անձանց վերասոցիալականացումը ՀՀ-ում սահմանված է որպես ռազմավարական ուղղություն «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ.-ների ռազմավարության» համաձայն:

Այս ամենը պահանջում է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման և կառավարման գործում ցուցաբերել միջգերատեսչական համագործակցություն, իրականացվող աշխատանքների մանկավարժականացում, նրանցում դասավանդող կադրերի պրոֆեսիոնալացում և մանկավարժական գործընթացի հումանացում:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախացումից հետո ՀՀ ՔԿՀ-ներում առկա կրթական գործընթացները և գործող իրավիճակը գրեթե ուսումնասիրված չեն գիտնական մանկավարժների կողմից, անհրաժեշտություն է առաջանում մասնագիտական մակարդակով ուսումնասիրել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման գործընթացը և գործող պրակտիկան, վերհանել առկա հիմնախնդիրները և մշակել հիմնախնդիրների լուծման գիտականորեն հիմնավորված համակարգ:

Հետազոտության օբյեկտը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության առարկան ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման համակարգն է:

Հետազոտության նպատակը ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման առկա վիճակի ուսումնասիրությունն է, հիմնախնդիրների բացահայտումն ու կրթության կառավարման և կազմակերպման ժամանակակից համակարգի մշակումն է:

Հետազոտության վարկածն այն ենթադրության մեջ է, որ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման գործընթացն առավել արդյունավետ կլինի, եթե.

1. Ուսումնասիրվեն ՔԿՀ-ներում կրթության կազմակերպմանն առնչվող միջազգային և ներպետական կարգավորումները, մանկավարժական գաղափարներն ու մոտեցումները, եվրոպական և հետխորհրդային երկրների փորձը:
2. Բացահայտվեն և վերլուծվեն ՔԿՀ-ում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման հիմնախնդիրներն ու մարտահրավերները:
3. **Մշակվի ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ** հետևյալ բաղադրիչներով՝
    - քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդել,
    - ՔԿՀ-ներում կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթների շրջանակ,
    - ՔԿՀ-ներում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդել և դրա իրականացման մանկավարժական պայմաններ,
    - ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաներ ու սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը,
    - ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշներ:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպմանն առնչվող մոտեցումները, դրանք կարգավորող ազգային և միջազգային օրենսդրությունը, առկա միջազգային փորձը,
- բացահայտել ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հիմնախնդիրները,

- մշակել արդի պայմաններում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ:

<u>Հետազոտության մեթոդները:</u> Հետազոտության շրջանակում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- փաստաթղթերի և առկա փորձի վերլուծություն,
- վիճակագրական տվյալների վերլուծություն,
- անկետավորում,
- պատմահամեմատական, վերլուծության և համադրման մեթոդներ,
- հարցազրույց:

<u>Հետազոտական թեմայի մշակվածության աստիճանը:</u> Հանցագործություն կատարած անձանց կրթության կազմակերպման հիմնախնդիրը քիչ ուսումնասիրված ոլորտ է, որը պայմանավորված է դրա շուրջ հետազոտական աշխատանքների իրականացման սոցիալ-հոգեբանական, քաղաքական, գործառնական, իրավական դժվարություններով ու խոչընդոտներով: Այդուհանդերձ, մանկավարժական սույն ուսումնասիրության համար ելակետային սկզբնաղբյուր են դիտարկվել մանկավարժության, սոցիալական և պենիտենցիար մանկավարժության ոլորտի աշխատությունները, առանձին հեղինակների դիրքորոշումներն ու տեսական մոտեցումները:

Պենիտենցիար մանկավարժության, որպես առանձին գիտակարգի ձևավորման գործընթացում իրենց ներդրում են ունեցել Ա.Յա. Հարդը, Ի.Յա. Ֆոինցկինը, Ս.Վ. Պոզնիշևը, Ի.Ա. Կաիրովը և այլք:

Պենիտենցիար մանկավարժության հիմնախնդիրներին են անդրադարձել Ս.Ա. Վետոշկինը, Վ.Վ. Անտոնեչենկոն, Է.Վ. Զաուտորվան, Օ.Մ. Կլիմովան, Ա. Գ. Սլոմչինսկին, Վ.Մ. Լիտմիշկովան և այլք:

Կրթադաստիրակչական ճանապարհով անձի բարոյական վերափոխման հարցերը քննվել են ժամանակի նորարար մանկավարժների (Կ.Դ. Ուշինսկու, Վ.Ա. Սուխոմլինսկու, Ա.Ս.Մակարենկոյի) աշխատություններում, իսկ վերադաստիարակության հիմնախնդրին անդրադարձել են Յու.Կ. Բաբանսկին, Վ.Ա. Կարակովսկին և այլք:

ՔԿՀ-ներում սոցիալ-մանկավարժական աշխատանքների կարևորության, դրա իրականացման ձևերին են անդրադարձել Յու.Վ. Վասիլկովան, Վ.Ա. Նիկիտինան, Լ .Վ. Մարդախայեվը, Ն.Ֆ. Բասովը, Մ.Ա. Գալագուզովան, Տ.Բ. Բուտենկոն և այլք:

ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հարցերին վերջին տասնամյակում իրենց աշխատանքներում անդրադարձել են Ն.Գ. Կլիմյուկը (2005թ.), Ն.Կ. Շեպկինան (2012), Յա.Ս. Իվասենկոն (2014):

Արևմտյան հեղինակներից ՔԿՀ-ներում կրթության նպատակի և առանձնահատկությունների հիմնախնդրին անդրադարձել են Բ.Ի. Վոլֆորդը, Դ. Ուերները, Ս. Թեյլորը և այլք:

ՀՀ-ում անկախության տարիներին ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության հիմնախնդրի ուղղությամբ էական գիտական ուսումնասիրություններ չեն իրականացվել, սակայն հայկական իրականության մեջ հիմնախնդրին ընդհանրական անդրադարձել են Ա.Ս. Արզումանյանը, Է. Գրինը և այլք:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u> կայանում է նրանում, որ.

1. հայրենական մանկավարժական գիտության մեջ մասնագիտական մակարդակով առաջին անգամ ուսումնասիրվել է ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակը, անկախացումից ի վեր ձևավորվող պրակտիկան պատմական զարգացման համատեքստում,
2. վեր են հանվել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա հիմնախնդիրներն ու խոչընդոտները՝ քաղաքականության և պրակտիկայի մակարդակում, ուսումնասիրվել է եվրոպական և հետխորհրդային երկրների փորձն այդ ուղղությամբ,
3. մշակվել է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ, որի բաղադրիչներն են՝ քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդելն ու կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթները, ՔԿՀ-ում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերը արտացոլող մոդելն ու դրա իրականացման մանկավարժական պայմանները, ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաներն ու սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը, ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշները:

<u>Հետազոտության տեսական նշանակությունը:</u> Ատենախոսության արդյունքները կարող են՝

1. նպաստել ՔԿՀ-ներում իրականացվող ողջ աշխատանքի մանկավարժականացմանը և մասնագիտացմանը,
2. հարստացնել ընդհանրապես մանկավարժության և մասնավորապես մեծահասակների կրթության (անդրագոգիկայի), պենիտենցիար մանկավարժության տեսությունն ու պրակտիկան,
3. հարստացնել հայ մանկավարժության տեսության պատմությունը՝ ներկայացնելով ՀՀ-ում անկախացումից ի վեր քրեակատարողական համակարգում կրթության իրականացման պատմական զարգացումը,

4. նպաստել համեմատական մանկավարժության զարգացմանը՝ ներկայացնելով հետխորհրդային երկրների և միջազգային փորձը այս բնագավառում:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը:</u> Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքները կարող են՝

1. գիտական հասարակության ուշադրությունը հրավիրել ՀՀ նորագույն պատմության ՔԿՀ-ներում մեր կողմից բացահայտված կրթության հիմնախնդիրների վրա,
2. օգտագործվել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության քաղաքականության մշակման աշխատանքներում՝ ապահովելով գիտականորեն հիմնավորված փաստահենքություն,
3. օգտակար լինել ՀՀ ՔԿՀ-ներում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի, դասընթացների պլանավորման, մշակման, իրականացման և գնահատման պատասխանատուներին, ՔԿՀ-ում դասավանդողներին,
4. օգտակար լինել դասախոսներին, ասպիրանտներին, պենիտենցիար մանկավարժություն, անդրագոգիկա, կրթության փիլիսոփայություն, մանկավարժության պատմություն, իրավաբանական հոգեբանություն, քրեակատարողական իրավունք դասավանդելիս, համապատասխան հատուկ դասընթացներ վարելիս, այդ թեմայով ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ մշակելիս:

<u>Պաշտպանության ներկայացվող դրույթները.</u>

1. ՔԿՀ-ներում կրթության նպատակի վերանայումը, պատժողական քաղաքականությունից հրաժարվելն ու վերականգնողական սկզբունքների ներդրման քաղաքականության անցնելը հասարակության հումանացման և պետության անվտանգության ապահովման կայուն երաշխիք են:
2. Պենիտենցիար մանկավարժության ոլորտում ՀՀ և միջազգային փորձի ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը մեծապես նպաստում է մեծահասակների կրթության բնագավառի հարստացմանը, առկա հիմնախնդիրների և մարտահրավերների բացահայտմանն ու լուծման արդյունավետ ուղիների մշակմանը:
3. ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացման մակարդակը՝ մարդու իրավունքների միջազգային ուղենիշային համատեքստում:

4. ՔԿՀ-ներում կրթության արդիականացումը մեծապես կախված է կրթության կառավարման և կազմակերպման այնպիսի համակարգի առկայությունից, որի բաղադրիչները կապահովեն.
   - միջգերատեսչական համագործակցություն կառավարման գործընթացում,
   - համապատասխան բովանդակություն, մեթոդաբանական գործիքակազմ, մանկավարժական պայմաններ ուսուցման գործընթացում,
   - չափելի վերջնարդյունքներ մանկավարժական գործընթացի հիմնական սուբյեկտների (դասավանդողների և ունկնդիրների) աշխատանքը գնահատելիս:

Հետազոտության արդյունքները քննարկվել են «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի Մանկավարժության ամբիոնի 28.04.2021-ին և 23.06.2021-ին կայացած սեմինարներում, ներկայացվել «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի 26.04.2021-ին կայացած «Լեզու, մշակույթ, կրթություն» խորագրով միջազգային գիտաժողովում:

Հետազոտության բազա են հանդիսացել ՀՀ 5 ՔԿՀ-ները՝ «Աբովյան», «Արմավիր», «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Սևան»:

Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով.

Առաջին փուլում /2019-2020/ ուսումնասիրվել, հավաքագրվել և համակարգվել է թեմային առնչվող գրականությունը, ազգային և միջազգային օրենսդրությունն ու դրանց առնչվող իրավական փաստաթղթերը, ինչպես նաև ՔԿՀ-ներում կրթության միջազգային, տարածաշրջանային և ազգային պրակտիկան:

Երկրորդ փուլում /2020-2021/ հստակեցվել է հետազոտության բովանդակությունը, մշակվել են հարցաթերթիկները, որոնց հիման վրա իրականացվել են սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Իրականացված աշխատանքների հիման վրա շարադրվել է ատենախոսությունն ըստ համապատասխան պահանջվող կառուցվածքի, տպագրվել են 7 հոդվածներ, ձևակերպվել են եզրակացություններն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Աշխատանքը բերվել է ամբողջական և վերջնական տեսքի:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 142 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, բացահայտված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, նկարագրված են հետազոտության իրականացման փուլերը:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է **«Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացումը»,** բաղկացած է հետևյալ երեք ենթագլուխներից.

- «ՔԿՀ-ներում կրթության նպատակի հիմնախնդիրը»,
- «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթությունը մարդու իրավունքների միջազգային ուղենիշներում»,
- «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման իրավական հիմքերը ՀՀ-ում»:

Այս գլխում անդրադարձ է կատարվել պենիտենցիար մանկավարժության՝ որպես մանկավարժական գիտության առանձին ուղղության ձևավորմանն ու զարգացմանը (Ա.Յա.Հերդ, Մ.Ն, Հերնեթ, Ի.Յա. Ֆոինցկին և այլք), դիտարկվել և ներկայացվել են տարբեր գիտնական-մանկավարժների կողմից ՔԿՀ-ներում կրթության նպատակի հիմնախնդրի շուրջ սահմանումներն ու մոտեցումները, ուսումնասիրվել են ՔԿՀ-ներում կրթության իրավունքի իրացմանն առնչվող միջազգային (եվրոպական և տարածաշրջանային) փաստաթղթերը, ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման իրավական հիմքերը կրթության և արդարադատության բնագավառներում:

Մասնավորապես, ներկայացվել են ՔԿՀ-ում կրթության վերաբերյալ Ա.Ս. Մակարենկոյի, Վ.Ա.Նիկիտինայի, Յու.Վ. Վասիլկովայի, Մ.Ա. Գալագուզովայի, Լ.Վ. Մարդախայեվի, Ն.Գ.Կլիմյուկի, Ն.Ֆ. Բասովի, Վ.Լ. Պոլոզյուկի, Տ.Պ. Բուտենկոյի, Օ.Վ. Բոտայեվայի, Վ.Տ. Վոլովի, Ն.Կ. Շեպկինայի և Յա.Ս. Իվասենկոյի տեսակետները: Ռուս մանկավարժներից զատ ուսումնասիրվել են նաև արևմտյան գիտնականներից Բ.Ի. Վոլֆորդի, Դ. Ուերների, Ռ. Վրայթի, Ս. Թեյլորի և այլ հեղինակների գաղափարները: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ամփոփվել, ըստ շեշտադրման հիմքի դասակարգվել և ներկայացվել են ՔԿՀ-ում կրթության նպատակի սահմանման հիմնական մոտեցումները:

Կարևորելով ՔԿՀ-ներում վերադաստիարակության հիմնախնդիրը՝ ներկայացվել են նաև վերադաստիարակության նպատակի վերաբերյալ մոտեցումները (Ամիրջանյան Յու., Բաբանսկի Յու.Կ., Ղույումչյան Գ.Ե. և այլք), անդրադարձ է կատարվել մասնավորապես հայ անվանի հոգեբան Ս.Արզումանյանի ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում անձի հարմարման փուլերին, ՔԿՀ մանկավարժների կողմից իրականացվող դաստիարակչական գործունեության կողմերին, որոնք հիմք են

հանդիսացել քրեակատարողական համակարգում կազմակերպվող կրթության կառավարման և կազմակերպման համար անհրաժեշտ գործիքների մշակման աշխատանքներում:

ՔԿՀ-ներում կրթության իրավունքի իրացմանն առնչվող միջազգային մոտեցումների ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), Եվրոպական Խորհրդի (ԵԽ) և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) տարբեր մարմինների և կառույցների կողմից ընդունված միջազգային ու տարածաշրջանային նշանակություն ունեցող փաստաթղթերին: ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման իրավական հիմքերի ուսումնասիրության ընթացքում, հաշվի առնելով դրա կարգավորման միջնախարարական և միջգերատեսչական լինելու հանգամանքը, քննության են ենթարկվել «կրթության բնագավառի քաղաքականություն» և «կրթական քաղաքականություն» հասկացությունների շուրջ անվանի գիտնականների մոտեցումները (Է.Դ. Դնեպրով, Օ.Ն. Սմոլին, Ի.Դ.Ֆրումին, Ս.Ա. Բելյակով և այլն):

ՀՀ կրթության բնագավառի քաղաքականության շրջանակում ուսումնասիրվել են ոլորտի հիմնական իրավանորմատիվային հիմքերը, որոնց թվում՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (1999թ.), «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (2005թ.), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (2004թ.), «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը (2009թ.), ՀՀ-ում մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը (2005թ.), ՀՀ-ում ցկյանս ուսումնառության հայեցակարգը (2009թ.) և այլն: ՀՀ արդարադատության բնագավառի օրենսդրության ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են ՀՀ-ում մարդու իրավունքների առնչվող ընդհանուր քաղաքականությունը և մասնավորապես ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց իրավունքներին և պարտականություններին առնչվող իրավանորմատիվային հիմքերը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման պրակտիկան»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից.

- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպումը սկանդինավյան որոշ երկրներում (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա)»,
- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպումը հետխորհրդային որոշ երկրներում (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա)»,
- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկան ՀՀ-ում»:

Հաշվի առնելով ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման մոդելների բազմազանությունը՝ սույն գլխում ներկայացվել է քրեակատարողական համակարգում միջազգային առաջադիմական ուղենիշներ սահմանողներ, ինչպես նաև օրինակելի

մոդել հանդիսացող երկրների (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա) ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկան: Վերջինիս շրջանակում անդրադարձ է կատարվել նաև դեռևս 1969թ.-ին պրոֆեսոր Ն. Քրիստինի կողմից առանձնացված ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հինգ հիմնական մոդելներին (արտահանման, ներմուծման, ինքնաբավության, պայմանագրային և խառը): Մյուս կողմից, անդրադարձ է կատարվել նաև նախախորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման քաղաքականությանը և պրակտիկային, ինչպես նաև առանձնահատուկ կարևորվել և ներկայացվել է հետխորհրդային երկրներից Բելառուսի, Մոլդովայի, Ուկրաինայի փորձառությունը: **Այս գլխում ուսումնասիրվել և վերլուծվել է անկախությունից սկսած ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման և իրականացման գործընթացը:**

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է **«ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման առաջարկվող համակարգը»,** բաղկացած է երկու ենթավերնագրերից.

- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակի ուսումնասիրություն ու գնահատում»,
- «ՔԿՀ-ներում կրթության կառավարման և կազմակերպման մշակված համակարգ»:

ՀՀ 5 ՔԿՀ-ներում («Արմավիր», «Աբովյան», «Կոշ», «Սևան», «Վարդաշեն») նպատակային սկզբունքով ընտրված ընդհանուր առմամբ 85 անձանց (70-ը՝ դատապարտյալներ, 15-ը՝ դասավանդողներ) շրջանում իրականացված հարցաթերթիկային հարցումների արդյունքների հիման վրա վեր են հանվել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հիմնախնդիրները: ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա իրավիճակի, այն կարգավորող ազգային և միջազգային քաղաքականության, գործող պրակտիկայի և զարգացման միտումների վերաբերյալ մեր հետազոտության արդյունքներից ելնելով մենք եկել ենք այն եզրահանգման, որ ՀՀ-ում ներկայումս ձևավորվել է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման բավականին փորձ, սակայն գործող համակարգն արդիականացման անհրաժեշտություն ունի:

Այդ նպատակով մշակվել է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ, որի բաղադրիչներն են՝ քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդելն ու կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթները, ՔԿՀ-ում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերը արտացոլող մոդելն ու դրա իրականացման մանկավարժական պայմանները, ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաներն ու սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը, ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշները: Ստորև ներկայացվում են մեր կողմից մշակված համակարգի 2 հիմնական մոդելները:

Գծապատկեր 1: Քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդել



Գծապատկեր 2: ՔԿՀ-ներում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդել



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԿՀ-ում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպմանն ուղղված գիտամանկավարժահոգեբանական գրականության, ազգային ու միջազգային իրավական նորմերի, եվրոպական և հետխորհրդային երկրների փորձի, ՀՀ-ում առկա իրավիճակի ուսումնասիրումը, մեր կողմից ՔԿՀ-ներում դասավանդողների և պատիժ կրող անձանց շրջանում իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ են տալիս նշել, որ.

1. ՀՀ ՔԿՀ-ներից միայն 6-ում (12-ից) պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացման համար ստեղծված են համապատասխան պայմաններ ու դրանից օգտվելու հնարավորություն: ՔԿՀ-ներում կրթության թե կազմակերպիչների և թե շահառու խմբերի շրջանում առկա է այն համոզմունքը, որ կրթության միջոցով է հնարավոր իրականացնել պատիժ կրող անձի վերադաստիարակությունն ու վերասոցիալականացումը, պատժողական քաղաքականությունից անցնել վերականգնողական արդարադատության, կանխարգելել կրկնահանցագործությունը, դրանցով իսկ նպաստել հասարակության հումանացմանը, պետության անվտանգության ապահովմանը:

2. ՀՀ քրեակատարողական համակարգում վերջին տարիներին կրթության կազմակերպման գործընթացում ընդգրկված անձանց աճի միտումը, իրականացվող կրթական ծրագրերի բազմազանության ապահովումը, թիրախ խմբերի և նոր ՔԿՀ-ների ներառումը, պետության կողմից այս բնագավառին ռազմավարությունների մակարդակում անդրադառնալը վկայում են ոլորտի աստիճանական զարգացման, ինչպես նաև պետության կողմից դրա կարևորման, հանրային նշանակության լինելու հանգամանքի մասին:

3. ՔԿՀ-ում կրթական ծրագրերի մասնակցությունը նպաստում է պատիժ կրող անձանց ինքնակրթության ակտիվացմանը, օգտակար զբաղվածության ապահովմանը: Այն հանգեցնում է հիմնականում փոփոխությունների գիտելիքի մակարդակում, մասամբ՝ հմտությունների և սակավ՝ դիրքորոշման, վերաբերմունքի մակարդակում: Այս տեսանկյունից կարևորում ենք կրթության իրավունքի իրացման նպատակով բոլոր ՔԿՀ-ներում հավասար պայմանների ու հնարավորությունների ստեղծումը՝ առանձնահատուկ շեշտելով միջնակարգ կրթության համընդհանուր հասանելիությունը, միջին մասնագիտական կրթության խորացումը, վերաորակավորման համար կրթական այլընտրանքային ծրագրերի առկայությունը:

4. ՔԿՀ-ներում կրթության արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտում են հետևյալ հիմնախնդիրները.

    - Մակրո մակարդակում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպմանն առնչվող միջազգային իրավունքով նախատեսված մի շարք նորմերի իրականացման հնարավորության բացակայությունը, կրթության և

արդարադատության ոլորտների միջև պետական քաղաքականության մակարդակում անբավարար համագործակցությունը,

- Մեզո մակարդակում ՔԿՀ-ներում կրթության բովանդակության մեթոդաբանական բազայի և գործիքակազմի անկատարությունը, ՔԿՀ-ում կրթության կառավարման գործընթացում ներգրավված մարմինների գործառույթների հստակության և դասավանդողների կոմպետենցիաներին ներկայացվող պահանջների բացակայությունը,
- Միկրո մակարդակում ՔԿՀ-ներում իրականացվող կրթական ծրագրերի մասամբ անհամապատասխանությունը պատիժ կրող անձանց կարիքներին, դասընթացների իրականացման և վերահսկողության գործընթացում ակնկալիքների, վերջնարդյունքների, հետադարձ կապի, գնահատման համակարգի, մասնակցության խրախուսման մեխանիզմների անլիարժեքությունը:

5. ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման գործընթացում դեռևս չեն կիրառվում լավագույն փորձ համարվող երկրների այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, ինչպիսիք են համայնքային ուսումնական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը, թվային ուսումնառության կենտրոնների ստեղծումը, ՔԿՀ մուտք գործելիս գրագիտության գնահատումը և դրանով պայմանավորված անհատական ծրագրերի կազմումը և այլն:

6. Քրեակատարողական համակարգում կազմակերպվող կրթության մեր կողմից արված մշակումները, մասնավորապես ա) ՔԿՀ-ներում կրթության նպատակի և խնդիրների սահմանումը, բ) կառավարման սուբյեկտների և նրանց գործառույթների մոդելը գ) լիարժեք կրթության իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները դ) կրթության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդելը ե) ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաները և սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը զ) ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշները ձևավորում են ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման ամբողջական, կուռ, արդիական համակարգ, որն ուղղված է վերջնարդյունքների ապահովմանը:

7. ՔԿՀ-ում կրթության կազմակերպման գործընթացում առանձնակի ուշադրության են արժանի պատիժ կրող անչափահասները, որպես պաշտպանության և աջակցության առանձնահատուկ կարիք ունեցող խումբ: Նրանց նկատմամբ նպատակահարմար է կիրառել առավել զգայուն, երեխայակենտրոն քաղաքականություն և մոտեցումներ: Հնարավորության պարագայում նրանց ուսումնառությունը անհրաժեշտ է կազմակերպել քրեակատարողական համակարգից դուրս, համայնքում գտնվող ուսումնական հաստատությունում:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի ներքոնշյալ աշխատանքներում.

1. Թադևոսյան Մ., ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ոչ ֆորմալ կրթության կազմակերպման պրակտիկան, «Գիտական Արցախ» պարբերական: 1(8): էջ 189-202: Երևան, «ԱՐՑԱԽ» հրատ., 2021:
2. Թադևոսյան Մ., ՀՀ ՔԿՀ-ներում դատապարտյալների ընկալումները կրթության վերաբերյալ, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի»: 2(55): էջ 23-30, Երևան, Լինգվա, 2021:
3. Թադևոսյան Մ., Բանտային կրթության սկանդինավյան երկրների փորձը, «Մանկավարժական միտք» հանդես: 2 (75): էջ 5-21, Երևան, «ԶԱՆԳԱԿ» հրատ., 2021:
4. Թադևոսյան Մ., Բանտային կրթության համակարգը եվ առկա հիմնախնդիրները ՀՀ-ում, «Մանկավարժական միտք» հանդես: 2 (75): էջ 45-58, Երևան, «ԶԱՆԳԱԿ» հրատ., 2021:
5. Թոփուզյան Ա., Թադևոսյան Մ., Քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման ժամանակակից համակարգը, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի»: 2(55): էջ 40-53, Երևան, Լինգվա, 2021:
6. Թոփուզյան Ա., Թադևոսյան Մ., Քրեակատարողական հիմնարկներում դասավանդողներին ներկայացվող կոմպետենցիաներ, «Մանկավարժական միտք» հանդես: 1 (74): էջ 59-63, Երևան, «ԶԱՆԳԱԿ» հրատ., 2021:
7. Tadevosyan M., Education at Penitentiary Institutions in Some Post-Soviet Countries, «Main Issues Of Pedagogy And Psychology» Scientific Periodical Journal: 19(1): p.67-77: Yerevan, 2021:

TADEVOSYAN MISHA V.

PROBLEMS OF ORGANIZING EDUCATION AT THE PENITENTIARY INSTITUTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract o the dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in speciality 13.00.01- "Theory and Practice of Pedagogy".

The defense of the dissertation will be held on November 11, 2021, at 12:00 p.m., at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: RA, 0010, Yerevan, Tigran Mets Ave 17.

SUMMARY

The relevance of the research: The basis to organize education in penitentiary institutions (hereinafter penitentiaries) lies on the ideas and principles of the fulfillment of an individual's right to education, on the concepts of lifelong learning, on supplementary and continuous education, on the paradigm of humanistic pedagogy and the access of education for all. The necessity to organize education at penitentiaries derives from the interests of prisoners (convicts and detainees), as well as the society and the state. Thus, for the state, the organization of education for this target group provides a guarantee and an opportunity to humanizee the society, provide public safety, form a socially responsible citizen, prevent recidivism and improve the overall social situation of crimes and legal offenses. For the prisoners (convicts and detainees), education is a means and an opportunity to develop skills to integratee into the society, understand the role and the importance of the human rights, perceive the rights as a social value, appreciate the idea of freedom and form a positive attitude toward the future. It also serves as a mechanism for self-education and self-development.

The relevance of the study is also determined by the following priorities of the Armenian reality:

- The importance of inclusiveness and accessibility of education for everyone is regularly emphasized in the Armenian reality. The right to education and its enforcement, equal opportunities, accessibility and affordability of education are regulated by a number of legal acts in Armenia. Individual's right to education is enshrined in the RA Constitution, the Strategic Program of Prospective Development (2014-2015) of the RA, the annual action plans of the RA Government (2019-2022), while the right to education of prisoners (convicts and detainees) is regulated by the policies of the judiciary system of the RA.

- The RA judiciary system reforms emphasize the issue of transition from punitive policies to restorative justice through education in the penitentiaries.
- Resocialization of prisoners (convicts and detainees) is defined as a strategic direction in the "Strategy of the Penitentiary and Probation Sectors of the RA for 2019-2023"

The aim of the research is to study the current state of the organization of education for prisoners (convicts and detainees) in penitentiary institutions of the RA, identify problems and develop a comprehensive system of education management and organization.

The objectives of the research are:

- Analysis of the approaches to organize education of prisoners (convicts and detainees) in penitentiary institutions, the relevant national and international legislation and the existing international experience.
- Identification of the problems to organize education in the RA penitentiary institutions.
- Development of a comprehensive system of management and organization of education for prisoners in penitentiary institutions of the RA.

Scientific novelty of the research:

- It studies the current state of the organization of education, as well as its practice in the RA penitentiary institutions since independence in the context of the historical development for the first time on the professional level in national pedagogical science.
- It identifies the problems and challenges of the organization of education in the RA penitentiary institutions on the level of policy and practice; it also studies the experience of European and post-Soviet countries.
- It develops **a comprehensive system of management and organization of education for prisoners in penitentiary institutions of the RA**, which includes the following elements: the model of education management at penitentiary system and the functions of the main players in education management; the model reflecting the methodological grounds of the content of education at penitentiaries and the pedagogical conditions for its implementation, the competences of educators in penitentiaries and the value- attitude component of the learners' (prisoners) competencies; criteria to assess the effectiveness of organizing education at penitentiaries.

Theoretical significance of the research: The research results can contribute to the pedagogical intervention and professionalization of the activities at penitentiaries; enrich theory and practice of pedagogy in general, as well as adult education (andragogy) with a

focus on penitentiary pedagogy in particular; enrich the history of the theory of the Armenian pedagogy by presenting the historical development of education in penitentiary institutions since independence; stimulate the development of comparative pedagogy by presenting the experience of European and post-Soviet countries in this field.

Practical significance of the research: The approaches and the results of the research can draw the attention of the scientific community to the problems of education we identified in the penitentiaries of the RA; provide evidence-based scientific grounds for the development of educational policies at penitentiaries in Armenia; be useful for state bodies and public organizations responsible for planning, developing, implementing and assessing educational programs in the penitentiaries of the RA, as well as for the teachers working at penitentiaries; be used by university professors and post-graduate students for teaching penitentiary pedagogy, andragogy, philosophy of education, history of pedagogy and legal psychology; be useful for conduct relevant special courses and developing educational and methodological manuals on this topic.

The structure and volume of the research: The dissertation paper consists of Introduction, three chapters, Conclusion, Bibliography and Appendix. The volume of the dissertation paper is 142 pages of computer text.

Seven published articles cover the topic of our dissertation paper.

ТАДЕВОСЯН МИША ВАРУЖАНОВИЧ

ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ОБРАЗОВАНИЯ В ПЕНИТЕНЦИАРНЫХ УЧРЕЖДЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и практика педагогики”.

Защита диссертации состоится в 11 ноября 2021г. в 12^{00} на заседании специализированного совета 020 “Педагогика” ВАК РА (Высший аттестационный комитет) при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 37510, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Процесс организации обучения в пенитенциарных учреждениях основан на идеях и принципах реализации права личности на образование, на концепциях обучения на протяжении всей жизни, дополнительного и непрерывного образования, на парадигме гуманитарной педагогики и доступности образования для всех. Необходимость организации обучения в пенитенциарных учреждениях исходит из интересов заключенных (осужденных и задержанных), а также общества и государства. Таким образом, организация образования данной целевой

группы дает государству гарантию и возможность для гуманизации общества, обеспечения общественной безопасности, формирования социально ответственного гражданина, предотвращения рецидивов и улучшения общего социального положения ситуации в отношении преступлений и правонарушений. Для заключенных (осужденных и задержанных) образование является средством и возможностью развития навыков интеграции в общество, понимания роли и важности прав человека, восприятия права как социальной ценности, понимания идеи свободы и формирования позитивного отношения к будущему, а также механизмом самообразования и самовоспитания. Актуальность исследования обусловлена следующими приоритетами, присущими государственной системе РА:

- В армянских реалиях постоянно подчеркивается важность инклюзивности и доступности образования для всех. Право на образование и его обеспечение, равные возможности, доступность образования регулируются рядом законодательных актов в Армении. Право личности на образование закреплено в Конституции РА, в стратегическом программе перспективного развития (2014-2015) РА, в годовых планах деятельности Правительства РА (2019-2022), а также право на образование заключенных (осужденных и задержанных) регулируется политикой правосудия РА.
- Вопрос перехода от карательной политики к восстановительному правосудию через образование в пенитенциарной системе особенно важен в реформах в сфере правосудия в РА.
- Ресоциализация заключенных (осужденных и задержанных) определена как стратегическое направление в «Стратегии уголовно-исполнительной сферы и сферы пробации РА на 2019-2023 годы».

Цель исследования является изучение текущего состояния организации образования заключенных (осужденных и задержанных) в пенитенциарных учреждениях РА, выявление проблем и разработка современной системы управления и организации образования.

Задачи исследования

1. Проанализировать подходы организации образования заключенных (осужденных и задержанных) в пенитенциарных учреждениях, соответствующее национальное и международное законодательство, существующий международный опыт.
2. Выявить проблемы организации образования в пенитенциарных учреждениях РА.
3. Разработать систему управления и организации образования заключенных (осужденных и задержанных) в пенитенциарных учреждениях РА.

Научная новизна исследования

1. Изучена организация образования заключенных (осужденных и задержанных) в пенитенциарных учреждениях РА на профессиональном уровне в контексте исторического развития и отечественной педагогической науки.
2. Выявлены проблемы и препятствия организации образования в пенитенциарных учреждениях РА на уровне политики и практики, а также изучен опыт европейских и постсоветских стран.
3. Разработана **система управления и организации образования заключенных в пенитенциарных учреждениях РА,** которая включает в себя следующие элементы: модель управления образованием в пенитенциарной системе и функции основных субъектов управления образованием; модель, отражающая методологические основы содержания образования в пенитенциарной системе и педагогические условия для ее реализации; компетенции преподавателей в пенитенциарных учреждениях и ценностно-познавательный компонент компетенций учащихся (заключенных); критерии оценки эффективности организации образования в пенитенциарных учреждениях.

Теоретическое значение исследования: Результаты исследования могут способствовать педагогизации и профессионализации всей работы, проводимой в пенитенциарных учреждениях, а также обогатить теорию и практику педагогики в целом и образования взрослых (андрагогики), пенитенциарной педагогики в частности, обогатить историю теории армянской педагогики путем представления исторического развития системы образования в пенитенциарной системе в РА, а также быть полезным для развитии сравнительной педагогики путем представления опыта европейских и постсоветских стран в этой сфере.

Практическое значение исследования: Представленные в диссертации подходы и результаты могут привлечь внимание научного сообщества к выявленным нами проблемам образования в пенитенциарных учреждениях РА; обеспечить научно-обоснованную основу при разработке образовательной политики в пенитенциарных учреждениях РА; быть полезными для государственных органов и общественных организаций ответственными за планирование, разработку, реализацию и оценку образовательных программ в пенитенциарных учреждениях РА, также для преподавателей работающих в пенитенциарных учреждениях; применяться профессорами и аспирантами вузов для преподавания пенитенциарной педагогики, андрагогики, философии образования, истории педагогики, правовой психологии, уголовного права, а также быть полезными для проведения соответствующих спецкурсов и для разработки учебно-методических пособий по данной теме.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. Объем диссертации составляет 142 страницы компьютерного текста.

По теме диссертации опубликовано 7 статей.